

ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՆԵՐԳՐՄԱՆ
ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության արդյունավետության վրա ազդում են տարբեր գործոններ: Երկար տարիների ընթացքում երկրագործության ոլորտում ծավալուն հետազոտություններ են իրականացվել, ստացվել են բույսերի աճի վրա պարարտանյութերի, ոռոգման տարբեր համակարգերի և այլնի կիրառության ազդեցությունները, սակայն մենք չենք կարող խոսել գյուղատնտեսական գործընթացների լիարժեք կանխատեսման մասին: Այդուհանդերձ, նույնիսկ հստակ կախվածությունների բացակայության պարագայում, ելնելով առկա տեղեկատվությունից, կարող ենք որոշակի ազդեցություն գործել գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության վրա որոշակի գործոնների հստակեցման ճանապարհով: Այդ գործոններից մեկը հանդիսանում է ոռոգումը: Իսկ եթե խոսքը գնում է քանջարանոցային մշակաբույսերի ոգոռման մասին, ապա այսօրվա դրությամբ կարելի է նշել, որ առավել արդյունավետ է համարվում կաթիլային ոռոգումը¹:

Կաթիլային ոռոգում ասելով հասկանում ենք դանդաղ և երկարատև ջրամատակարարում դեպի բույսի արմատային հատվածը՝ ողջ վեգետացիոն շրջանում բույսի խոնավության օպտիմալ մակարդակի պահպանության համար:

Կաթիլային ոռոգումը հիմնականում լայն կիրառություն ունի չորային կլիմայով այնպիսի երկրների համար, որոնցից են Իսրայելը, ԱՄՆ-ը, Մեքսիկան, Թունիսը, Նոր Զելանդիան և այլն:

Կաթիլային ոռոգման կիրառման դեպքում ոռոգման նորման կրճատվում է 20-50%-ով՝ համեմատած ոռոգման այլ եղանակների հետ, իսկ մի շարք դեպքերում էլ ջրի տնտեսումը կարող է հասնել մինչև 75-90%-ի: Նշենք, որ կաթիլային ոռոգումը ծախսված ջրի միավորի հաշվով առավել բարձր բերք է ապահովում:

Կաթիլային ոռոգումն անկասկած ունի շատ առավելություններ: Դրանցից են՝

- Հողի աերացիան (օդափոխությունը): Հողի գերխոնավացում չի իրականացվում, այն ապահովում է արմատների ինտենսիվ շնչումը աճի ամբողջ ցիկլի ընթացքում: Արմատային թթվածինը արմատային համակարգին թույլ է տալիս ակտիվ գործել:
- Ձուրը դանդաղ է ներմուծվում, հողը էրոզիայի չի ենթարկվում, այս ամենը թույլ է տալիս խուսափել խոնավության կորստից:
- Լուծված պարարտանյութերը ջրի հետ ներմուծվում են անմիջապես արմատային հատված: Կատարվում է սննդարար նյութերի արագ և ինտենսիվ կլանում:
- Բույսի տերևները չեն խոնավեցվում, նվազում է հիվանդությունների տարածման հավանականությունը:
- Կաթիլային ոռոգումը կարգավորում է ոչ միայն մատուցվող ջրի քանակությունը, այլ նաև դրանում լուծված պարարտանյութերինը:
- Հաջորդ առավելությունը ջրի զգալի տնտեսումն է, քանի որ խոնավեցվում է միայն ամբողջ տարածության 40-60 տոկոսը, այսինքն բույսերի միայն արմատային հատվածը, նվազում են կորուստները գոլորշիացման ժամանակ :
- Կաթիլային ոռոգումից ստացվող արտադրանքը որակապես ավելի բարձր է ստացվում:
- Նվազում են աշխատուժի վրա կատարվող ծախսերը:

¹ <http://agrimatco.by/?irrigation-system=metodika-rascheta-sistem-kapel'nogo-orosheniya>

- Մոլախոտերի բազմացումը զգալիորեն կրճատվում է, եթե ոչ բացառվում:
- Ամբողջ համակարգը ավտոմատացված է, և անհրաժեշտության դեպքում այն կարող է միացվել համակարգչին: Այս ամենը թույլ է տալիս աշխատաժամանակը կրճատել մոտ 60 տոկոսով: Սակայն այս ամենի հետ մեկտեղ, կաթիլային ոռոգումն ունի նաև որոշակի թերություններ, որանք են՝

- Կաթիլային ոռոգման համակարգերի կիրառումը բավականին ծախսատար է: Մեծ ներդրումներ են պահանջվում դրա տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար: Կաթոցիկների միացումը, խողովակների վիճակը մշտական ստուգումների կարիք են ունենում: Համակարգի միջին արժեքը 1 հեկտարի համար, ըստ Terra LTD մասնավոր ընկերության տվյալների, կազմում է 1000-3000 ԱՄՆ դոլար¹: Գինը տատանվում է կախված ցանվող կուլտուրայի տեսակից, ցանքատարածությունից, ոռոգման նպատակով օգտագործվող ջրի որակից (այստեղ հիմնականում հարցը գոիչ կայաններին է վերաբերում) և այլն:

- Կաթիլային ոռոգման համակարգի արժեքը բավականին մեծ է, այդ իսկ պատճառով պետք է հստակ և ճիշտ պլանավորել համակարգի շահագործման հետ կապված բոլոր աշխատանքները: Եթե պլանավորումը ճիշտ չիրականացվի, ապա համակարգը ճիշտ չի շահագործվի, որի հետևանքով սպասվելիք արդյունքը չի ստացվի, հետևաբար նաև շահույթը փոքր կլինի կամ վատագույն դեպքում ընդհանրապես չի լինի: Շատ կարևոր է ճիշտ ընտրել գտակայանը: Այն կախված է ջրամատակարարման աղբյուրից: Համակարգի ներմուծման արժեքը կախված է նաև ցանքի ժամկետից: Եթե պլանավորվում է համակարգը շահագործել մեկ տարի, ապա կարելի է ընտրել առավել բարակ և էժան խողովակներ: Իսկ եթե ցանքի տևողությունը երկարաժամկետ է, ապա ավելի նպատակահարմար է գումարը ներդնել առավել ամուր խողովակներով թանկարժեք համակարգի մեջ:

Հողվածի շրջանակներում փորձ է արվել գնահատել կաթիլային ոռոգման ներդրման արդյունավետությունը միավոր տարածության լուրջի մշակության դեպքում: Հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ

Գյուղացիական տնտեսություններում ոռոգման նոր տեխնոլոգիայի (կաթիլային) ներդրման արդյունավետությունը հիմնավորող հաշվարկային ամփոփ տվյալները 1 հա լուրջի համար

Ցուցանիշները	Չափի միավորը	Ոռոգման տվորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում
1հա-ի հաշվով կաթիլային ոռոգման համար պահանջվող ներդրումները	հազ. դրամ	0	1100
Ոռոգման ջրի ծախսը	մ ³	8000	3200
Կաթիլային ոռոգման սարքավորումների պահպանման ծախսերը	հազ. դրամ	0	35
Ջրի խնայողությունը արժեքային, 1 մ ³ -11դրամ սակագնի դեպքում	հազ. դրամ	0	52.8
Ջրումների քանակը	ջրում	9	9
Ջրման համար պահանջվող աշխատանքային ծախսումները 1հա-ի հաշվով	մարդ.օր	6	2.4
Տնտեսումը աշխատանքային ծախսումների կրճատման հաշվին (1մարդ.օրը-5000 դրամին համարժեք հաշվարկի դեպքում)	հազ. դրամ	0	18.0
Լուրջի 1հա-ից ստացվող բերքը	գ/հա	390	429.0

¹ http://agrodovidka.info/Terra_LTD_Kompanija

Ցուցանիշները	Չափի միավորը	Ռոռզման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ռոռզման դեպքում
Հաշվարկային արտադրական ծախսերը (չհաշված ռոռզման սարքավորման տեղադրման ծախսերը) ¹	հազ. դրամ	3510	3439.2
Իրացման գինը 1կգ-ի հաշվով	դրամ	128.6	129
Արտադրանքի իրացումից հասույթը	հազ. դրամ	5015.4	5516.9
Զուտ եկամուտը	հազ. դրամ	1505.4	2042.7
Զուտ եկամուտի հավելանքը	հազ. դրամ	0	537.3
Նոր տեխնոլոգիայի ներդրման ծախսերի փոխհատուցման ժամկետը	տարի		2.05

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, կաթիլային ռոռզման դեպքում միակ թերությունը դրա ներդրման բարձր արժեքն է: Հաշվարկներից ակնհայտ երևում է, որ նույն 9 ջրումների դեպքում 1 հա-ից ստացվող բերքը կաթիլային ռոռզման պարագայում ռոռզման սովորական եղանակից ավելին է ստացվում 39.0 ցնետներով: Ակնառու է, որ զուտ եկամտում ևս տարբերությունը զգալի մեծություն է կազմում՝ մոտ 537.3 հազ. դրամով ավելի: Իսկ ներդրման ծախսերի փոխհատուցման ժամկետը կազմում է շուրջ 2 տարի: Նմանատիպ հաշվարկներ արվել է նաև պտղի և խաղողի համար, որոնց դեպքում կաթիլային ռոռզման ներդրման ծախսերը փոխհատուցվում են համապատասխանաբար՝ 4.2 և 2.7 տարում:

¹ Հաշվարկային արտադրական ծախսերի բարձր մակարդակը պայմանավորված է նրանով, որ հաշվարկները կատարվել են հիմք ունենալով ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան միջոցառումների և ռեսուրսների (կալյունական, ֆոսֆորական, ազոտական պարարտանյութեր, անհրաժեշտ թունաքիմիկատներ) ծախսերը, ինչպես նաև գնահատվել է աշխատանքային ծախսումների դիմաց վարձատրությունը՝ 1 մարդ*օրվա համար 5000 դրամ: Վերջինս գյուղացիական տնտեսությունների կողմից աշխատանքները իրականացնելիս չի հաշվարկվում և ծախսերի մեջ սովորաբար չեն ներառում:

ԵՎԳԵՆՅԱ ՀԱՎՈՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Բոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

Համառոտագիր

Հոդվածում փորձ է արվել առաջադրել կաթիլային ոռոգման ներդրումը և գնահատել 1 հա լոլիկի, ինչպես նաև պտղի և խաղողի համար ոռոգման նոր տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում) ներդրման արդյունավետությունը: Հաշվարկները ցույց են տալիս, որ ոռոգման ջրի ծախսերի, աշխատանքային ծախսումների կրճատման և սնուցման վիճակի բարելավման արդյունքում բարձրանում է մշակաբույսերի բերքատվությունը, արդյունքում ավելանում է զուտ եկամուտը, որը հնարավորություն է տալիս նոր տեխնոլոգիաների ներդրման ծախսերը փոխհատուցել կարճ ժամանակահատվածում. լոլիկի համար շուրջ 2 տարի, իսկ պտղի և խաղողի համար՝ համապատասխանաբար 4.2 և 2.7 տարի:

Բանալի բառեր. գյուղատնտեսական մշակաբույս, կաթիլային ոռոգում, ոռոգման սովորական եղանակ, ոռոգման նոր տեխնոլոգիա, ներդրում, ներդրման արդյունավետություն:

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ВНЕДРЕНИЯ ТЕХНОЛОГИИ КАПЕЛЬНОГО ОРОШЕНИЯ

ЕВГЕНИЯ АКОПЯН

*соискатель Института экономики
им. М. Котаняна НАН РА*

Аннотация

В статье автор предлагает внедрить систему капельного орошения и дает оценку эффективности внедрения новых технологий ирригации (капельное орошение) для томата, плодов и винограда на площади 1 га. Расчеты показывают, что в результате сокращения расходов воды на орошение, затрат труда и улучшения общего уровня питания повышается урожайность сельскохозяйственных культур. Следовательно, увеличивается и чистая прибыль, позволяющая возмещать затраты на внедрение новых технологий в наиболее короткие сроки: для томата в течение около двух лет, а для плодов и винограда соответственно - 4.2 и 2.7 лет.

Ключевые слова: сельскохозяйственные культуры, капельное орошение, обычная система орошения, новая технология ирригации, внедрение, эффективность внедрения.

EFFICIENCY ASSESSMENT OF DRIP IRRIGATION SYSTEM BEING INTRODUCED

YEVGENYA HAKOBYAN

*Ph.D. Student
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

The article attempts to propose introduction of drip irrigation and assess the efficiency of new irrigation technology (drip irrigation) if introduced to irrigate 1 hectare of soil on which tomatoes are growing (separately for fruits and grapes as well). Based on calculation results, with declining irrigation and other operational costs and as a result of better nutrition increase in crop yields is reported, thus resulting in higher net incomes earned allowing to ensure shorter payback periods in case of cultivating the followings: 2 years for growing tomatoes; and respectively 4.2 and 2.7 years in case of growing fruits and grapes.

Keywords: crops, drip irrigation, traditional irrigation method, new irrigation method, introduction. efficiency of introduction